

## ԱՏՈՐՈԳՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԱՆԵՐՆ ԱԾԱԿԱՆԻ ԱՌԱՎԱՑՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՈՒՄ

Գ. Գ. ՇՈՎԵՓՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Գ. Ֆ. ԲԴԵՅԱՆ

ԳՊԴ օտար լեզուների ամբիոնի վարիչ,

ԳՊԴ պրոֆեսոր

Հայտնի իրողություն է, որ նախադասության կազմավորման միջուկը ստորոգայնությունն է, որը հնարավորություն է ընձեռում, խոսքային իրադրությանը համապատասխան, լեզվական ծևերի օգնությամբ արտահայտելու մարդու մտածողական գործունեության նվազագույն ակտերը: Է. Բենվենիստն իր «Լեզվական վերլուծության մակարդակները» հայտնի աշխատության մեջ, խոսելով բառակապակցության և նախադասության միջև ընկած սահմանագծի մասին, գրում է, որ դա պայմանավորված է նախադասության ստորոգայնության հատկանիշով, և որ «նախադասության մյուս բոլոր հատկանիշները երկրորդային են այդ առանձնահատկության հարաբերությամբ, նախադասության միակ հատկանիշը նրա ստորոգային բնույթն է: Առանց ստորոգման նախադասություն գոյություն չունի...»: [Ենեթենստ, 1965: 446-447]:

Նույն մտքի մեկ այլ ձևակերպման ենք հանդիպում S. Լոմտիկի մոտ. «Այն, ինչն օժտված է ստորոգման հատկությամբ, նախադասություն է: Այն, ինչն օժտված չէ ստորոգման հատկությամբ, նախադասություն չէ» [Լոմտիկ, 1961: 67]:

Այստեղից հետևում է, որ ստորոգման երևույթի համարժեք մեկնաբանությունն անքակտելիորեն կապված է նախադասություն հասկացության ըմբռնման հետ:

Ժամանակակից լեզվաբանության մեջ նախադասությունը մեկնաբանվում է առնվազն երկու կերպ՝ կամ որպես կոնկրետ ասույթ, այսինքն՝ խոսքի միավոր, կամ որպես վերացական սխեմա, կաղապար, որն իրացվում է կոնկրետ ասույթների մեջ, բայց չի նույնանում նրանց հետ: Հայտնի են այս երկու մոտեցումները սահմանազատելու բազմաթիվ փորձեր՝ «նախադասություն» եզրը հատկացնելով կամ կոնկրետ ասույթին, կամ վերացական բանաձևին, սակայն լեզվաբանների մեծ մասն այդ եզրը գործածում է չտարբերակված, այսինքն՝ խոսում են նախադասության մասին լայն առումով՝ նկատի ունենալով հաղորդակցային մակարդակը՝ խոսքը, և ներ առումով՝ շարահյուսական մակարդակը, այսինքն՝ նախադասության վերացական բանաձևը:

Վ. Կորուխովն, օրինակ, գտնում է, որ նախադասությունն ինքնին հաղորդակցային միավոր չէ, այն այդպիսին դաշնում է այն դեպքում, երբ վերածվում է ասույթի կամ համատեքստի (կամ նրա մի մասի) [Կոդոխօս, 1975: 33-34]:

Վ. Զվեգինցևն իր ինքնատիպ աշխատություններից մեկում, խոսելով լեզվի և խոսքի հարաբերակցության մասին, գտնում է, որ խոսքից, իրադրությունից դուրս նախադասությունն «անկենդան է, թիթեյյա ամանի մեջ փակված, զրկված շարժումից և ճկունությունից»: Լեզվական մակարդակի նախադասությունը, նախադասության կաղապարը նա անվանում է կեղծ նախադասություն, իսկ նրա

արտահայտած իմաստը՝ կեղծ իմաստ [Յեղանակ, 1976: 189]:

Գ.Զահուկյանը, առանձնացնելով շարահյուսական չորս մակարդակ (բառային, շարային, նախադասական, տեքստային), նախադասական մակարդակում տարբերակում է ասույթ և լիասույթ հասկացությունները: Ասույթ անվան տակ լեզվաբանը հասկանում է պարզ նախադասությունը, իսկ լիասույթ անվան տակ՝ ընդհանրապես նախադասություն, ինչպես պարզ, այնպես էլ բարդ [Զահուկյան, 2003: 13]:

Ասույթը գործառվում է որպես հաղորդակցային միավոր և, որպես այդպիսին, անմիջականորեն կապվում է մտքի ծևերի, ինչպես նաև հաղորդակցման և տրվող տեղեկատվության պայմանների հետ: Ն. Շեխտմանը «հաղորդակցում» է անվանում մտածողության մեջ պատկերացուների այն միացությունը, որը խոսողի կողմից հանգեցվում է ստորոգային կապի: Այս մոտեցմամբ հաղորդակցայնությունը և ստորոգայնությունը կարելի է համարել ասույթի բնորոշ, տարբերակի հատկանիշներ [Շեխտմահ, 1965]:

Հարկ է նշել, որ ստորոգման գաղափարը առնչվում է նախադասություն և ասույթ հասկացությունների տարբերակման հետ: Այսպես, ստորոգման և նախադասության փոխհարաբերության համատեքստում նշագծվում են երեք հիմնական մոտեցումներ:

1. տրամաբանական, որի դեպքում ստորոգումը դիտվում է որպես դատողության բաղադրիչների՝ սուբյեկտի և ստորոգյալի, թեմայի և ռենայի, տրվածի և նորի կապ,

2. քերականական, երբ ստորոգումն ըմբռնվում է որպես նախադասության ենթակայի և ստորոգյալի միջև եղած կապ,

3. ընդհանրապես ժխտվում է նախադասության և ստորոգման կապը:

Ինչ վերաբերվում է ստորոգման և ասույթի փոխհարաբերությանը համատեքստում, ապա ուշագրավ են Ս. Ցեյտլինի դիտողությունները: Նա գտնում է, որ, եթե տարբերակները նախադասությունը՝ որպես ծևական, և ասույթը՝ որպես գործառական միավոր, ապա ստորոգումը (որպես խոսողի տեսանկյունով սահմանված՝ հաղորդման հարաբերումը իրականությանը) պետք է ճանաչվի որպես ասույթի և ոչ թե նախադասության հատկանիշ [Վեյնուս, 1975]: Մեզ համար այստեղ կարևորվում է լեզվաբանի այն միտքը, որ, ամենաընդհանուր ծևով, ստորոգման միջոցով ասույթի բովանդակությունը հարաբերվում է արտալեզվական իրականությանը կամ, ավելի ճիշտ կլիներ ասել, արտալեզվական իրականությունն արտացոլվում է ասույթի բովանդակության մեջ:

Ակադեմիկոս Է. Աթայանը նշում է, որ ստորոգման առանձնահատկությունների սահմանումը թույլ է տալիս ավելի ցայտուն կերպով ընդգծել լեզվի յուրակերպությունը ոչ լեզվական աշխարհի համեմատությամբ, որտեղ այդ կապը էապես ատրիբուտային բնույթ ունի [Աթայան, 1981: 198]: Պարզ ատրիբուցիան, լեզվաբանի կարծիքով, անվանման (նոմինացիայի) մակարդակից վեր չի բարձրանում, մինչդեռ ստորոգումը միշտ առաջ է բերում ասույթ. ընդ որում հատկանիշի և առարկայի՝ գիտակցության մեջ տեղի ունեցող վերամիավորումն այդ դեպքում արդեն ոչ թե հատկանիշն առարկային ներհատուկ լինելու (պատկանելիություն) ուղղագիծ արձանագրումն է, այլ «եղիցի» բնույթ ունեցող ինչ-որ հաստատում: «Ստորոգող մարդը՝ պրեդիկատորը, - գրում է Ե. Աթայանը, -համես է գալիս որ-

պես մի ուրույն դեմիուրգ, որը «Եղիշի» է ասում արդեն եղածի վերաբերյալ և այդ «ասելը»՝ ասույթակազմության այդ գործունեությունը, ոչ այլ ինչ է, եթե ոչ ստորոգում [Աթայան, 1981: 199]: Եթե Աթայանի այս դիտարկումները արտարկենք առկայացման տեսության ոլորտ, ապա կարող ենք ասել, որ ստորոգումը լեզվական միավորի առկայացման նախապայմանն է:

Լեզվաբանական գրականության մեջ ստորոգման վերաբերյալ արտահայտված ամենատարբեր կարծիքներն ի մի բերելով՝ նկատենք, որ ամենից շատ իրար հակադրված են հետևյալ երկու տեսակետները. ըստ մի տեսակետի՝ ստորոգման ընդհանուր կարգի իմաստն ու դերը ասույթի հարաբերումն է իրականությանը [Չմետահով, 1981]: Դամաձայն մյուս տեսակետի՝ ստորոգումը դիտվում է որպես հատուկ տեսակի հարաբերություն ասույթի բաղադրիչների միջև, որն առաջանում է շնորհիվ նախադասության մեկ բաղադրիչի (ստորոգյալի կամ գործառույթով նրան նման կառուցվածքային այլ տարրի) յուրատեսակ հակադրության մեկ այլ բաղադրիչի [Աճմոնի, 1975]: Ստեղծվում է այն տպավորությունը, որ այս երկու տեսակետներն իրար հակադրի են և իրար բացառող, սակայն այդպիսի տպավորություն կարող է առաջանալ միայն դրանց բացարձակացման դեպքում. իրականում, կարծում ենք, որ այս տեսակետներից յուրաքանչյուրը արտացոլում է բուն ստորոգումը միայն մեկ կողմից: Առաջինը վերաբերում է ստորոգման բովանդակությանը, երկրորդը՝ ծեփն:

Ասույթ դարձած, այսինքն՝ առկայացած նախադասության բովանդակության մեջ առանձնանում են երկու բաղադրիչներ. առաջին բաղադրիչը դիտվում է որպես հարաբերակցված հենց առարկայի հետ, իսկ երկրորդն ընկալվում է որպես առարկայի ներկայացուցիչ (փոխարինող) մտքի մեջ: Առաջին բաղադրիչը՝ այսպես կոչված իմաստային պրեդիկատը, իր մեջ միավորում է ստորոգյալի և նրանից կախված բառերի բովանդակությունը, իսկ երկրորդը՝ այսպես կոչված իմաստային սուբյեկտը, ենթակայի և նրան ստորադասված բառերի բովանդակությունը: Այլ եզրաբանությամբ կարելի է խոսել ենթակայական շարույթ և ստորոգական շարույթ եզրերի մասին: Այս երկու նշված բաղադրիչների առանձնահատուկ հակադրությունն ընդունված է անվանել ստորոգային հարաբերություն: Ստորոգման միջոցով էլ իրականացվում է ասույթի բովանդակության հարաբերումն իրականությանը:

Շատ հեղինակներ որպես ստորոգային հարաբերություն են որակում նախադասության առկայական անդամատման բաղադրիչների, այսինքն՝ ելակետային և նոր բովանդակություն պարունակող մասերի (որոնց տարրեր հետազոտողներ տարբեր անվանումներ են տալիս - ասույթի հիմք և ասույթի միջուկ, թեմա և ռեմա և այլն) միջև եղած հարաբերությունը [Հենոմուս, 1975, Աճմոնի, 1975]:

«Առկայական անդամատումը,- գրում է Ն. Պարնասյանը,- Վեր հանելով մտքի ընթացքը՝ նրա շարժումը հնից դեպի նորը, իրականության հետ հարաբերակցության գաղափարը տարածում է նախադասության ամբողջ բովանդակության վրա, որոշում նրա՝ օբյեկտիվ աշխարհին հարաբերելու կարգը» [Պարնասյան, 1986: 55]:

Լեզվաբանական գրականության մեջ առանձնացվում են ստորոգային հիմքի և առկայական անդամատման փոխազդեցության չորս հիմնական դեպք.

1) առկայական անդամատման բաղադրիչների միջև եղած սահմանը հա-

մընկնում է Ենթակայի և ստորոգյալի խմբերի, միակազմ նախադասության բառացված մասի և զգացական պատկերի միջև եղած սահմանին,

2) առկայական անդամատման սահմանն անցնում է ստորոգյալի խմբի միջով,

3) առկայական անդամատման սահմանն անցնում է Ենթակայի խմբի միջով,

4) երկկազմ նախադասության ներսում չկա սահման առկայական անդամատման բաղադրիչների միջև, քանի որ ամբողջ նախադասությունը համուս է գալիս որպես նորի մարմնացում՝ ռենա:

Առկայական անդամատման և ստորոգյալի հիմքի փոխազդեցության շնորհիվ ասույթի մեջ ստեղծվում, առկայանում են տարբեր մակարդակների՝ տրամաբանական և քերականական ստորոգյային հարաբերություններ, որոնք կարող են նաև չհամընկնել իրար [Պառնայան, 1986, 56]:

Ստորոգյային կառույցներում ածականի առկայացման առանձնահատկությունների հետազոտման տեսանկյունից, մեր կարծիքով, կարևոր նշանակություն է ձեռք բերում հետևյալ տեսակետը. ասույթի բովանդակության և իրականության հարաբերությունը երևան է գալիս ոչ միայն եղանակի, դեմքի և ժամանակի նշանակություններում, այլ նաև իրադրության՝ ժամանակի մեջ տեղայնացման/ոչ տեղայնացման նշանակության մեջ: Այս կամ այն իրադրությունը ներկայանում է կամ որպես մի ուղղությամբ ընթացող ժամանակի մի որոշակի պահ՝ հատված (While reading this book, I noticed), կամ որպես այդպիսի տեղայնացում չունեցող, երբ խոսքն անորոշ պարբերականությամբ սովորության, տիպականության մասին (Reading such books, I always noticed), կամ որպես այդ հարաբերությամբ չեղող (Have you read such a thing?), երբ խոսողի համար տվյալ դեպքում նշանակություն չունի, թե այդ գործողությունը եղել է մենք, թե բազմաթիվ անգամներ. կարևոր է միայն, թե՝ եղե՞լ է այն ընդհանրապես, թե՝ ոչ: Ասույթի բովանդակություն-իրականություն հարաբերությունը կարող է արտահայտվել բայի մեջ, բայց կարող է լինել նաև նրանից դուրս, կարող է լինել «ցրված», հաճակցված, ներակա, շատ բազմատեսակ: Ժամանակային տեղայնացվածության իմաստի մեջ նա տեսնում է կերպայնության տարր, երբ խոսքը դեպքի իրականացման բնույթի մասին է, և ժամանակայնության տարրի, երբ նկատի է առնվում հատկանիշի վերագրման տեղայնացումը ժամանակի մեջ: Պետք է ընդգծել, որ տվյալ գործառույթը չի կարելի նույնացնել բայի ժամանակների հետ:

Այսպիսով, ստորոգումը, Գ. Զահուկյանի դիպուկ բնորոշմամբ, սուրբեկտիվ ակտ է օբյեկտիվ իրականության որևէ կողմի մասին, որի դեպքում եզրեր են ծառայում ուշադրության առարկան (Ենթական) և առարկայի՝ տվյալ պահին կարևոր համարվող որպես նորություն դիտվող հատկանիշը [Զահուկյան, 1974: 43]:

Անվանական ստորոգյալներում իմաստագործառական յուրովի հարաբերությունների մեջ են մտնում հանգուցային բայ և ածական անդամները: Դանգուցային օժանդակ բայերը կառույցի իմաստի սերման առումով ամենակին էլ չեղող դիրք չեն գրավում ածականով արտահայտված վերադրի կողքին: Ածականով արտահայտված անվանական ստորոգյալի բայը ստորոգման կրողն է, իսկ ածականը՝ ստորոգման բովանդակության արտահայտիչը: Ի տարբերություն բայա-

կամ ստորոգյալի, անվանական ստորոգյալը բնութագրում է սուբյեկտը ոչ թե գործողությունների տեսքով, այլ սուբյեկտը դասում է անձերի, առարկաների, երևույթների որոշակի դասի, դրանց վերագրում է որոշակի հատկանիշ կամ արտահայտում վիճակ:

Լեզվաբանական գրականության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ անվանական ստորոգյալի կազմում հանգուցային բայի դերի մասին: Դամաձայն մի տեսակետի՝ բայ-հանգույցը գուտ կապակցող (հանգուցային) գործառույթ է իրականացնում սուբյեկտի և հատկանիշի միջև, և անտեսվում է այն հանգամանքը, որ հանգուցային բայը կարող է նաև որոշակի իմաստային նորերանգներ հաղորդել ողջ ստորոգական կառույցին [Jespersen, 1949]: Դամաձայն մեկ այլ տեսակետի՝ առավելապես քերականացված լեզվական միավորներն անգամ հանդես չեն գալիս որպես գուտ ծն՝ առանց բովանդակության: Վ. Յարցևան, իր հոդվածներից մեկում անդրադարձալով սույն խնդրին, մատնանշում է, որ հանգուցային բայերն ունեն ընդհանրական իմաստ և սերտ կապի մեջ են անվանական ստորոգյալի երկրորդ անդամի (տվյալ դեպքում՝ ածականի) հետ՝ կազմավորելով մի ամբողջական իմաստային խումբ [Յարցևա, 1952: 27]:

Արդ, ամփոփելով վերը շարուդրվածը՝ փորձենք ներկայացնել ստորոգման գործառույթները ածականի առկայացման գործընթացում:

- Այսպիսով, ստորոգումը մենք ընկալում ենք որպես՝
1. մտավոր ակտ (Վերլուծություն, համադրում, մասնավորեցում, ընդհանրացում),
  2. հատկանիշի վերագրում ժամանակի մեջ (հատկանիշի վերագրման փոխարկայնություն, աստիճանայցում/ոչ աստիճանացում՝ որպես անվանական ստորոգյալի երկու տիպերի հակադրության դրսնորում),
  3. ասույթի բովանդակության հարաբերակցում օբյեկտիվ իրականությանը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Адмони В. Г.**, Содержательные и композиционные аспекты предложения, “Теоретические проблемы синтаксиса современных индоевропейских языков”, Л., Наука, 1975, 223 с.
2. **Бенвенист Э.**, Уровни лингвистического анализа, “Новое в лингвистике” (сб. ст.), вып.4. М., 1965, с. 434-449.
3. **Звегинцев В. А.**, Предложение и его отношение к языку и речи, М., МГУ, 1976, 306 с.
4. **Кацнельсон С. Д.**, Типология языка и речевого мышления, Л., Наука, 1972, 216 с.
5. **Кодухов В. И.**, О двух основных аспектах предложений, “Теоретические проблемы синтаксиса современных индоевропейских языков”, Л., Наука, 1975, 223 с.
6. **Ломтев Т. П.**, О сообщении по теории синтаксиса, “Вестник МГУ, филология и журналистика”, N 5, 1961.
7. **Степанов Ю. С.**, Имена, предикаты, предложения, М., Наука, 1981, 360 с.
8. **Цейтлин С. Н.**, Категория предикативности в ее отношении к высказыванию и предложению, “Теоретические вопросы синтаксиса современных индоевропейских языков”, Л., Наука, 1975, 223 с.
9. **Шехтман Н. А.**, Сочетаемость прилагательных и система их значений, АКД, Л., 1965.
10. **Ярцева В. Н.**, Основной характер словосочетания в английском языке, Известия Академии наук СССР. Отделение литературы и языка, Т. VI, Изд-во АН СССР, М., 1947, с. 501-508.
11. **Jespersen O. A.**, Modern English Grammar on Historical principles, 1949, part III, Heidelberg, Winter, 356 p.

12. *Աթայան Է. Ռ.*, Լեզվաբանական աշխարհի կերպավորումը և արտաքին աշխարհի վերաբերությունը, Եր.: ԵՊՀ հրատ., 1981- 391 էջ:
13. *Պառնայան Ն. Ա.*, Նախադասության քերականական կարգերը ժամանակակից հայենում, Եր.: ԳԱ հրատ., 1986, 273 էջ:
14. *Զահոնիկյան Գ. Բ.*, Ծարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003.-165 էջ:

#### **ФУНКЦИИ ПРЕДИКАЦИИ В ПРОЦЕССЕ АКТУАЛИЗАЦИИ ПРИЛАГАТЕЛЬНЫХ**

*Г. Г. Овсепян  
Г. Ф. Бдеян*

Предикация – это ядро актуализации языковых единиц и формирования высказываний. Высказывание рассматривается как единица коммуникации и непосредственно связана с формами мышления и условиями коммуникативной среды. Посредством предикации содержание высказывания относится к экстралингвистической реальности.

В результате взаимовлияния предикативной основы и языковой парцилляции появляются логические и предикативные соотношения, которые могут и не совпадать.

В процессе актуализации прилагательных функции предикации нами воспринимаются как:

1. мыслительный акт (анализ, синтез, обобщение, конкретизация),
2. атрибуция признака во временном пространстве,
3. корреляция содержания высказывания с объективной реальностью.

#### **THE FUNCTIONS OF PREDICATION IN THE PROCESS OF ACTUALIZATION OF ADJECTIVES**

*G. G. Hovsepyan  
G. F. Bdeyan*

The core of actualization of language units, utterance formation - is predication. Utterance is regarded as a communication unit and is directly related to the forms of cognition and conditions of the sphere of communication. The content of utterance correlates with extralinguistic reality by means of predication. Logical and predicative correlations, which might not always coincide, appear in the result of mutual impact of predication base and language dismemberment. The functions of predication in the process of adjective actualization are perceived as

1. cognitive act (analysis, synthesis, generalization and specialization),
2. Attribution of trait in the temporal space,
3. Correlation of utterance contents with objective reality.